

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.03.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաշվետվություն կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի մասին: Նախապաշտպանությունների ժամանակացույցի քննարկում (Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան):
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպական աշխատանքների մասին հաշվետվություն (Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան):

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Ձեկուցողը նշեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2016-2017 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաները: Ամբիոնային նիստերում քննարկվել են թեմաները, կատարվել են ուղղումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախաձեռնությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Նշվեց, որ կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները բավարարում են պահանջվող չափանիշները, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք արդիական են, ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Ձեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր դասախոսի հանդիպման ժամանակացույցը հաստատված է ամբիոնի կողմից և փակցված է հայտարարությունների տախտակին:

Զեկուցողը նշեց նաև, որ սթ. ապրիլ ամսին նախատեսվում է անցկացնել հինգ մասնագիտությունների գծով ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Արդեն հաստատված է ապրիլ ամսին նախատեսվող նախապաշտպանության օրերը՝

- Պատմություն – 14. 04.17թ.
- Հայոց լեզու և գրակ. - 20. 04.17թ.
- Մանկ. և հոգեբ. - 15. 04.17թ.
- Անգլ. լեզու և գրակ. - 21. 04.17թ.
- Ֆրանս. լեզու և գրակ. - 21. 04.17թ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, սահստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

– Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները նախատեսվում է իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով / մարտի 20-ից մինչև ապրիլի 1-ը/: Ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը նախապես տրամադրվել են ուսանողներին: Կազմված թեստերը ստորագրվում են ամբիոնի վարիչի և կնքվում ֆակուլտետի դեկանի կողմից: Ընթացիկ ստուգումներն ու քննությունները առավել արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվել են հանձնաժողովներ, որոնցում ընդգրկվել են ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալը, յուրաքանչյուր կրթական ծրագրի պատասխանատուն և քննող դասախոսը:

Քննական գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով քննությունների արդյունքները փակցվում են ֆակուլտետների ցուցատախտակներին և տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը,
մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

-Հաստատել 2016-17 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների
և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան